# ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

**«Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-753-26.12.2023-ՏՀ-011/0), «Վիճակախաղերի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-753[1]-26.12.2023-ՏՀ-011/0) և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝Կ-753[2]-26.12.2023-ՏՀ-011/0) վերաբերյալ**

Կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-753-26.12.2023-ՏՀ-011/0), «Վիճակախաղերի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-753[1]-26.12.2023-ՏՀ-011/0) և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝Կ-753[2]-26.12.2023-ՏՀ-011/0) (այսուհետ միասին՝ Նախագծերի փաթեթ) մասնագիտական փորձաքննության են ենթարկվել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչությունում:

Նախագծերի փաթեթը ենթարկվել է իրավական, ֆինանսատնտեսագիտական, սոցիալական փորձաքննության:

Ստորև ներկայացվում է մասնագիտական փորձաքննության եզրակացությունը, ինչպես նաև Նախագծերի փաթեթին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանքը:

## Իրավական փորձաքննության արդյունքները

Նախագծերի փաթեթի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (այսուհետ՝ Սահմանադրություն) և օրենքների պահանջներին համապատասխանության տեսանկյունից նշենք հետևյալը.

1. «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին հոդվածով նախատեսվող «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածում նոր լրացվող 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ մասերի բովանդակությունը չի համապատասխանում Օրենքի 4-րդ հոդվածի վերնագրին: Օրենքի 4-րդ հոդվածը ունի «Շահումով խաղեր, ինտերնետ շահումով խաղերի, խաղատների գործունեություն կազմակերպողները» վերտառումը, սակայն Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքի 4-րդ հոդվածում նոր լրացվող 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ մասերը վերաբերում են որոշակի խումբ ինտերնետ շահումով խաղերի մասնակցության հնարավորության ստեղծմանը արգելելուն, այդ արգելքի պահպանման մեխանիզմեր սահմանելուն:

Ուստի առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող կարգավորումները նախատեսել առանձին հոդվածի տեսքով և չլրացնել Օրենքի 4-րդ հոդվածում՝ ապահովելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, առ այն, որ՝ «*Նորմատիվ իրավական ակտը ունենում է վերնագիր, որը համապատասխանում է նորմատիվ իրավական ակտի բովանդակությանը*:»:

2. Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքի 4-րդ հոդվածում նոր լրացվող 5-րդ մասի համաձայն. «*Օտարերկրյա պետություններում կազմակերպված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան լիցենզիա չունեցող կազմակերպությունների կողմից կազմակերպված ինտերնետ շահումով խաղերի կայքերն ենթակա են արգելափակման ինտերնետ հասանելիության ծառայություններ մատուցող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի օպերատորների կողմից՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով և ժամկետներում՝* ***Լիազոր մարմնի ղեկավարի կողմից հաստատված արգելափակման ենթակա կայքերի ցանկի հիման վրա:»:***

Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքի 4-րդ հոդվածում նոր լրացվող 6-րդ մասի համաձայն. «Սույն օրենքով նախատեսված արգելափակման ենթակա կայքերի ցանկերը հաստատվում են Լիազոր մարմնի ղեկավարի կողմից, արգելափակման ենթակա կայքեր բացահայտող միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությունների հիման վրա:»:

Ելնելով վերոգրյալից և արձանագրելով, որ Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքի 4-րդ հոդվածում նոր լրացվող 5-րդ և 6-րդ մասերում առկա է արգելափակման ենթակա կայքերի ցանկերը Լիազոր մարմնի ղեկավարի կողմից հաստատվելու մասին մտքի կրկնություն, առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքի 4-րդ հոդվածում նոր լրացվող 5-րդ մասում «Լիազոր մարմնի ղեկավարի կողմից հաստատված» արտահայտությունը հանել՝ ապահովելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջը, առ այն, որ՝ «*Նորմատիվ իրավական ակտերում բացառվում են իրավական նորմերի անհիմն կրկնությունները*»: Արդյունքում Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքի 4-րդ հոդվածում նոր լրացվող 5-րդ մասում կսահմանվի միայն ինտերնետ հասանելիության ծառայություններ մատուցող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի օպերատորների պարտականությունը, որը կարող է իրականացվել արգելափակման ենթակա կայքերի ցանկի հիման վրա: Արդեն 6-րդ մասում կսահմանվի այդ ցանկը հաստատելու իրավասություն ունեցող մամինը:

3. «Նորմատիվ իրավկան ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «*Նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:»:* Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք Նախագծում և «Վիճակախաղերի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում «Լիազոր մարմին» ձևակերպման կիրառման դեպքերը բացառել՝ փոխարենը օգտագործել «լիազոր մարմին» ձևակերպումը և այդպիսով ապահովել Օրենքում և «Վիճակախաղերի մասին» օրենքում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը:

4. Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքի 4-րդ հոդվածում նոր լրացվող 5-րդ, 7-րդ մասերում, 2-րդ հոդվածով նախատեսվող Օրենքի 6-րդ հոդվածի 2.1-ին մասում նոր խմբագրությամբ շարադրվող «զ1» կետում, «Վիճակախաղերի մասին»

օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող «Վիճակախաղերի մասին» օրենքի 4-րդ հոդվածում նոր լրացվող 8-րդ մասում, 2-րդ հոդվածով նախատեսվող «Վիճակախաղերի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի 5.2-րդ հոդվածում լրացվող 5-րդ մասում առաջարկում ենք «ՀՀ» բառը փոխարինել «Հայաստանի Հանրապետության» բառերով՝ ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասով, ըստ որի՝ «*Արգելվում են նորմատիվ իրավական ակտում կատարել բառերի կամ տերմինների անհարկի կրճատումներ, ինչպես նաև բառերի կամ տերմինների հապավումներ*:»:

5. Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքի 4-րդ հոդվածում նոր լրացվող 8-րդ մասում «Օրենքով» բառն առաջարկում ենք փոխարինել «օրենքով» բառով: Նույն առաջարկը վերաբերելի է նաև «Վիճակախաղերի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող «Վիճակախաղերի մասին» օրենքի 4-րդ հոդվածում նոր լրացվող 9-րդ մասում կիրառված «Օրենքով» բառին և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում նոր լրացվող 150.17-րդ հոդվածում կիրառված «Օրենքներով» բառին:

6. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը ապահովելու նպատակով՝ առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվող Օրենքի 6-րդ հոդվածի 2.1-ին մասում նոր խմբագրությամբ շարադրվող «q1» կետում «խաղի մասնակից» բառի փոխարեն օգտագործել «խաղացողը» բառը՝ համապատասխան հոլովաձևերով:

7. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջը պահպանելու նպատակով՝ առաջարկում ենք «Վիճակախաղերի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում 3-րդ հոդվածով նախատեսվող «Վիճակախաղերի մասին» օրենքի 7-րդ հոդվածով նոր լրացվող 6.1-րդ մասում «պետք է ենթարկվի աուդիտի՝» արտահայտությունը հանել:

8. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում նոր լրացվող 150.17-րդ հոդվածի 3-րդ մասը կարող է

խնդրահարույց լինել նորմի կիրառման փուլում: «Սույն հոդվածի 2-րդ մասով նշված խախտումը» արտահայտությունը վիճահարույց է դարձնում, թե Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում նոր լրացվող 150.17-րդ հոդվածի 3-րդ մասը գործում է այն պարագայում, երբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում նոր լրացվող 150.17-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված խախտումից հետո չի անցել 1 տարի, թե այն պարագայում, երբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում նոր լրացվող 150.17-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված վարչական պատասխանատվության ենթարկվելուց, այսինքն տուգանքի կիրևառումից հետո չի անցել 1 տարի: Իրավակիրառ ոլորտում խնդիրներից խուսափելու նպատակով առաջարկում ենք լրամշակել և հստակեցնել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում նոր լրացվող 150.17-րդ հոդվածի 3-րդ մասը:

9. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջի պահպանման նպատակով առաջարկում ենք «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում նոր լրացվող 150.17-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսվող տուգանքների չափերը սահմանել հիմք ընդունելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում տուգանքի չափի որոշման համար օգտագործվող արտահայտությունները:

10. Նախագծերի փաթեթի ամբողջ տեքստում առաջարկում ենք ապահովել բառերի ճիշտ ուղղագրություն, դասական թվականների ճիշտ գրությունը և նախադասությունների ճիշտ շարադասությունը:

## Եզրահանգում

Ամփոփելով փորձաքննության արդյունքները՝ կարող ենք նշել, որ Նախագծով սահմանված կարգավորումներում Սահմանադրության տեսանկյունից խնդրահարույց նորմեր առկա չեն:

Միաժամանակ առաջարկում ենք ներկայացված դիտարկումների հիման վրա ապահովել Նախագծով սահմանված կարգավորումների հստակությունը և համապատասխանությունը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին:

ՖՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ

ՖՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԶԵՄՖԻՐԱ ՀՈՎԱՍԱՓՅԱՆ

Կատարող՝ Գ. Մուրադյան (հեռ.՝ 011-513-248)

16.01.2024թ.

## ՏԵՂԵԿԱՆՔ

### Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

ՖՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ

ՖՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԶԵՄՖԻՐԱ ՀՈՎԱՍԱՓՅԱՆ

Կատարող՝ Գ. Մուրադյան (հեռ.՝ 011-513-248)

16.01.2024թ.

**Ֆինանսատնտեսագիտական փորձաքննության արդյունքները**

Նախագծերի փաթեթով (այսուհետ՝ Փաթեթ) առաջարկվում է արգելափակել օտարերկրյա պետություններում կազմակերպված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան գործունեության լիցենզիա չունեցող, ՀՀ տարածքում ինտերնետ կամ նմանօրինակ ցանկացած գլոբալ համակարգի և ցանկացած համակարգված ցանցային կապուղիների միջոցով խաղացողին որևէ շահումով խաղի կամ վիճակախաղի մասնակցելու հնարավորության ստեղծող կազմակերպությունների կայքերը, ինչպես նաև հնարավորություն ապահովել ՀՀ քաղաքացի չհամարվող ֆիզիկական անձանց համար արտարժույթով խաղադրույքներ կատարելու և շահումներ ստանալու համար:

Փաթեթի վերաբերյալ հարկ ենք համարում ներկայացնել հետևյալ նկատառումները:

1. Փաթեթում ընդգրկված «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին հոդվածի 2-րդ մասով արգելվում է օտարերկրյա պետություններում կազմակերպված ինտերնետ շահումով խաղերին մասնակցությանը հնարավորության ստեղծումը, ինչպես նաև այդ խաղերի գովազդումը Հայաստանի Հանրապետության տարածքում կամ Հայաստանի Հանրապետությունում հասանելի ամբողջ համացանցի տիրույթում: Նախագծի նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն «Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է օտարերկրյա պետություններում կազմակերպված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան լիցենզիա չունեցող կազմակերպությունների կողմից կազմակերպված ինտերնետ շահումով խաղերի մասնակցության հնարավորության և հասանելիության արգելափակման դեպքերը և կարգը»: Կարծում ենք, նշված մասերի միջև գոյություն ունի որոշակի անհամապատասխանություն, քանի որ 2-րդ մասով իմպերատիվ կերպով արգելվում է օտարերկրյա պետություններում կազմակերպված ինտերնետ շահումով խաղերին մասնակցությանը հնարավորության ստեղծումը: Հետևաբար, Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ նման կազմակերպությունների կողմից կազմակերպված ինտերնետ շահումով խաղերի մասնակցության հնարավորության և հասանելիության արգելափակման դեպքերի սահմանման լիազորության վերապահումն

ավելորդ է, քանի որ Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասը նման դեպքերի հնարավորություն չի նախատեսում: Իսկ եթե, այնուամենայնիվ, նման դեպքեր կարող են լինել, ապա անհրաժեշտ է դրանք սահմանել սույն Նախագծով:

2. Նախագծով առաջարկվում է սահմանել կարգավորումներ, որը հնարավորություն կտա ՀՀ քաղաքացի չհանդիսացող ֆիզիկական անձանց խաղադրույքներ կատարել և շահումներ ստանալ արտարժույթով: Մասնավորապես, համաձայն 2-րդ հոդվածի, հատուկ խաղային հաշիվների դրամական միջոցների մուտքագրումն (համալրումն), խաղադրույքների կատարումն և դրամական (փողային) շահումների հանձնումը (ելքագրումը) փոխանցվում (վճարվում) է անկանխիկ եղանակով՝ հայկական դրամով կամ արտարժույթով, երբ խաղի մասնակիցը չի հանդիսանում ՀՀ քաղաքացի, նույնականացման ընթացքում խաղի մասնակցի կողմից նշված բնակության վայրը (գրանցման հասցեն) չի գտնվում Հայաստանի Հանրապետությունում և <u>գործարքը կատարվել է ոչ Հայաստանի Հանրապետության համապատասխան համացանցային հաղորդակարգի (IP) հասցեից (գործարքի կատարման պահին չի գտնվում Հայաստանի Հանրապետության տարածքում),</u> և դրամական միջոցների մուտքագրման (համալրման), խաղադրույքների կատարման և դրամական (փողային) շահումների հանձնման (ելքագրման) փոխանցումը (վճարումը) չի իրականացվում ՀՀ Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված բանկի կամ վճարահաշվարկային կազմակերպության միջոցով…:»: Այսինքն, համաձայն Նախագծի, արտարժույթով խաղադրույք կատարելու համար օտարերկրյա քաղաքացին չպետք է գտնվի Հայաստանի Հանրապետությունում: Այս առումով, հարց է առաջանում, եթե արտարժույթվ հատուկ խաղային հաշիվների համալրման և խաղադրույքների կատարման համար պարտադիր պայման է հանդիսանում գործարքի՝ ոչ Հայաստանի Հանրապետության համապատասխան համացանցային հաղորդակարգի (IP) հասցեից իրականացումը կամ որ նույնն է գործարքի կատարման պահին ՀՀ տարածքում չգտնվելը, ապա դա ինչպե՞ս է նպաստելու օտարերկրացիների համար ներքին շուկայի գրավչության բարձրացմանը և, դրանով իսկ, զբոսաշրջության զարգացմանը, ինչպես նշվում է Նախագծին կից ներկայացված հիմնավորման մեջ: Կարծում ենք, արտարժույթով խաղադրույք կատարելու համար Նախագծով սահմանված մնացած պայմանները բավարար են և կարելի է վերը նշված սահմանափակումը Նախագծի 2-րդ հոդվածի տեքստից հանել:

3. Նշված նկատառումները վերաբերում են նաև Փաթեթում տեղ գտած «Վիճակախաղերի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծին:

*Եզրահանգում*

Փաթեթը ֆինանսատնտեսագիտական հիմնախնդիրների տեսանկյունից լրամշակման կարիք ունի՝ վերը նշված դիտողությունները հաշվի առնելու տեսանկյունից:

ՖՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՖՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԱՐԹՈՒՐ ԹԱՍԱՉՅԱՆ

կատարող՝ գլխավոր մասնագետ Գ. Կիրակոսյան
(հեռ.՝ 011 513-603)
09.01.2024թ.

*Սոցիալական փորձաքննության արդյունքները*

Նախագծերի փաթեթով առաջարկվում է լրացումներ և փոփոխություններ կատարել «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքում, համապատասխան լրացումներ կատարելով նաև հարակից օրենքներում:

Նախագծերի փաթեթին կից ներկայացված հիմնավորմամբ՝ խնդիրը կայանում է նրանում, որ օտարերկրյա պետություններում կազմակերպված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան գործունեության լիցենզիա չունեցող կազմակերպությունները առանց խոչընդոտի Հայաստանի Հանրապետության տարածքում ինտերնետ կամ նմանօրինակ ցանկացած գլոբալ համակարգի և ցանկացած համակարգված ցանցային կապուղիների միջոցով որևէ շահումով խաղի կամ վիճակախաղի մասնակցելու հնարավորություն են ստեղծում, որի արդյունքում ինտերնետ շահումով խաղերի և վիճակախաղերի (տոտալիզատորի) վրա

կատարվող խաղադրույքները դուրս են գալիս պետական վերահսկողությունից: Բացի այդ, ներկայիս կարգավորումներով Հայաստանի Հանրապետության տարածքում դրամական (փողային) շահումները կարող են գովազդվել և տրվել միայն Հայաստանի Հանրապետության դրամով, իսկ ինտերնետ շահումով խաղերի գործունեության կազմակերպչի կողմից շահումը փոխանցվում (վճարվում) է անկանխիկ եղանակով՝ հայկական դրամով, ինչը Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող ֆիզիկական անձանց հնարավորություն չի տալիս խաղադրույքներ կատարել և շահումները ստանալ արտարժույթով:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Նախագծերի փաթեթի հեղինակի կողմից առաջարկվում է.

- արգելել օտարերկրյա պետություններում կազմակերպված ինտերնետ շահումով խաղերին և վիճակախաղերին մասնակցելու հնարավորության ստեղծումը, ինչպես նաև այդ խաղերի գովազդումը Հայաստանի Հանրապետության տարածքում կամ Հայաստանի Հանրապետությունում հասանելի ամբողջ համացանցի տիրույթում,

- արգելափակել օտարերկրյա պետություններում կազմակերպված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան լիցենզիա չունեցող կազմակերպությունների կողմից կազմակերպված ինտերնետ շահումով խաղերի և վիճակախաղերի կայքերը,

- սահմանել կարգավորումներ, որոնք հնարավորություն կնձեռեն Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող ֆիզիկական անձանց խաղադրույքներ կատարել և շահումները ստանալ արտարժույթով,

-նախատեսել վարչական պատասխանատվություն ինտերնետ հասանելիության ծառայություններ մատուցող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի օպերատորների կողմից օրենքով սահմանված կարգով օտարերկրյա պետություններում կազմակերպված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան լիցենզիա չունեցող կազմակերպությունների կողմից կազմակերպված վիճակախաղի (տոտալիզատոր) և ինտերնետ շահումով խաղերի կայքերի արգելափակման պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար,

- շահումով խաղի կամ խաղատան, ինչպես նաև վիճակախաղերի կազմակերպիչների կողմից օրենքով սահմանված կարգով ներկայացված ֆինանսական

հաշվետվությունները ենթարկել աուդիտի՝ անկախ աուդիտորական կազմակերպության կողմից,

- սահմանել ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացնող աուդիտորական կազմակերպությանը ներկայացվող պահանջները և այլն:

Նախագծերի փաթեթի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չկան:

***Եզրահանգում***

Նախագծերի փաթեթը սոցիալ, կրթական, առողջապահական հիմնահարցերի տեսանկյունից լրամշակման կարիք չունի:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ, ԿՐԹԱԿԱՆ,
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ ԼԻԼԻԹ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Կատարող՝ Ս. Համբարձումյան (հեռ. 011-513-360)
10.01.2024թ.